

## ՑՈՒՑԱԿ ԶԵՌԱԳՐԱՑ

### «Յ. ՔԻՒՐՏԵԱՆ ՀԱԽԱՔԱԾՈՅ»Ի

(Նար. տե՛ս «Բազմավէպ» 1989, թիւ 1-4, էջ 354-412)

87

ԿԱՆՈՆԱԳԻՐՔ

(1621-1624 թ.)

Էջ՝ 490: - Մեծութիւն՝ 12,5×19: - Դրութիւն՝ միասիւն: - Նիւթ՝ թուղթ: - Գիր՝ բոլորգիր, երկու տարբեր գրչութիւններով: - Տող՝ 33-40: - Մանրանկար՝ էջ 196 եւ 197, սեւ մելանով զարդերու ուրուագծեր. էջ 425 նեղ կարմրաներկ սովորական խորան մը, լուսանցազարդով եւ զարդագրով. էջ 443 թռչնաձեւ լուսանցազարդի եւ զարդագրի մը ուրագծերը: - Գրիչ՝ առաջին մասին (էջ 1-91) Կարապետ, գուցէ նոյն՝ Կարապետ արեղայ Հիգանցիի հետ. երկրորդ մասին՝ Գրիգոր քահանայ Խիզանցի: - Տեղի՝ առաջին մասին՝ Սեպ գիւղ, «Ընդ հովանեաւ Սուրբ Աստուածածնին եւ Սուրբ Քրիստափորին». երկրորդ մասին՝ Խիզան: - Ստացող՝ Կարապետ Վրդ. հաւանաբար Մոկացին: - Կազմ՝ ԺԹ. դարու խաւաքարտ, կանաչ կաշեպատ ոսկեղբոշմ գօտիով. կռնակին վրայ ոսկեգիր «ԿԱՆՈՆ - ԳԻՐՔ» իրալու տակ: - Հանգամանք՝ տեղ տեղ լուսանքները ցեցակեր. վերակազմութեան ատեն էջերը կտրուած. սկիզբէն եւ վերջաւորութեան պակասաւոր: Հաւանաբար երեք գրչութիւններ են, որովհետեւ էջ 96էն յետոյ կու գան Ա. - ԺԱ. պրակ, ապա կրկին Ա. - Դ պրակ: էջ 94, 97-102 դատարկ են, իսկ էջ 95-96ի վրայ կայ ապաշխարութեան «Մեղա(,)

ամենասուրբ Երրորդութեան... Խոստովանիմ առաջի Աստուծոյ»: - Մանօրութիւն՝ «Ձեռագիրս գնած եմ հանգուցեալ Պետրոս Նշանեան գրավաճառէն, որ Կ. Պոլիսէն թղթատարով առաքած է ինծի»:

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

1. Էջ 1. «Սահմանք եւ կանոնք զոր եղին Առաքելութեալ ի ձեռն Կղեմա(յ)»:
2. Էջ 4. «Առաջին բան կանոնիս Առաքելոցն. Սահմանք եւ կանոնք սուրբ Առաքելոյն Թաղէոսի, ի գալ նորա յՈւրիհայ քաղաք, լուսաւորել զնոսա մկրտութեամբ աւազանին»:
3. Էջ 10. «Կանոնք Փիլիպպոսի Առաքելոյն»:
4. Էջ 11. «Սահմանք եւ կանոնք որ եղաւ ի սուրբ կաթուղիկէ եկեղեցի ի մեծ ժողովն Նիկիայ, որ հաւատոց համար ժողովեցան, հրամանաւ մեծ եւ աստուածասէր թագաւորին Կոստանդիանոսի»:
5. Էջ 25. «Կանոնք սրբոյն Արքանասի հայրապետին»:
6. Էջ 34. «Կանոնք առաք ի սրբոյն Գրիգորէ Պարքեւի Հայոց Լուսաւորչի եւ առաքելաշնորհ վկայի. յաւելումն ի Նիկիական կամոնս»:
7. Էջ 36. «Տեսութ Յնհաննու ասացեալ ի խնդրոյ սրբոյն Թարսոլի. Սահմանադրութիւն վասն պէսպէս եւ բուրապատիկ ախտից»:
8. Էջ 53. «Խրատ կանոնական սրբոյ վարդապետին Դաւթայ հոգացեալ որդ(ւ)ոյ Ալաւիկայ, վասն մկան անգամելոյ յաղ»:
9. Էջ 84. «Ի խնդրոյ Թումայ վարդապետին, աստուածաբնակ սուրբ ուխտին Մեծոփայ վանից, եւ ծառայարար կատարեալ նգնաւոր աստուածակիր հոգելից առն Յակոր վարդապետի Ղրիմեցոյ յաղակս ազգականութիւն»:
10. Էջ 103. «Վասն դատաստանաց օրէնք եւ սահմանք»: **Այս մասը չունի խորագիր. խորագիրը վերցուցինք էջ 109ի ստորին լուսանցքէն:**
11. Էջ 135. «Վերստին ժողովումն օրինաց համառաւ»:
12. Էջ 143. «Ամէնիմաստ թագաւորացն հոռմայեցւոցն օրինադրութիւն»:
13. Էջ 147. «Լեւոնի եւ Կոստանդիանոսի բարեպաշտ թագաւորաց՝ յառաջարան քաղաքական աւրինադրութեանս»:
14. Էջ 150. «Ընտրութիւն համառու յարիմացն քաղաքականաց Լեւոնի եւ Կոստանդեայ իմաստուն եւ բարեպաշտ թագաւորաց, զորոյ եւ մեծն Յուստիհանու զկարգ ուղղեալ ի բարեպաշտութիւն»: (*Տիտղոս - Ճթ.*)
15. Էջ 187. «Սահման զինուորութեան հաստատութեան եւ ահարկութեան ի քաղաքական օրինացն կարգէ»:
16. Էջ 194. «Գլուխ ընտրութեան ի Մովսիսական աւրինաց»:
17. Էջ 218. «Նախադրութիւն գրոց դատաստանի»: (*Միսիթար Գոշի Դատաստանագիրը*) **Գլ. Ա - ԺԱ: - «Սկիզբն Դատաստան(ի) եւ բիւ գլխոց. Աայ ըստ կարգի».** **Գլ. Ա - ՄՇԱ:**

18. Էջ 395. «Անտալովի նորտերոյն անսիգն է»։ (տե՛ս Բազմ. 1956, թիւ 1-2: Բանբեր Մատենադարանի, Հայ. Զ., Երեւան: Journal of the Royal Asiatic Society, 1962, Oct.)։

19. Էջ 403. «Առաջարանութիւն Փիլոնի Հարցմանց, յորում կատարեցաւ Փիլոն»։

20. Էջ 425. «Յոհաննու Որոտնե(ւ)ոյ ասացեալ. Ով Տէր Աստուած իմ Յիսուս Քրիստոս, բան Հաւը եւ որդի կուսին, տո՛ւր ինձ անկատարիս զկատարեալ»։

21. Էջ 490. «Յոհաննու Որոտնեց(ւ)ոյ տիեզերալոյս բարունապետի ասացեալ ի բան աւետարանին Յոհաննու որ ասէ. Ի սկզբանէ էր Բանն»։ Մնացած է միայն կէս էջ, մնացածը կորսուած է։

## ՑԻՇԱՏԱԿԱՐԱՆ

1. Էջ 1 եւ 425 լուսանցքներուն վրայ կայ կնիք մը սա գրութեամբ. «Յ(իսուս)ի ծ(ա)ռ(այ) Կարապետ Վարդապետ»։

2. Էջ 43. «Վայ զիս, վայ զիմ հոգիս, Ու (հազար) վայ մեղաւորիս»։

3. Էջ 91. «Արդպրեցաւ սուրբ գիրքս որ կոչի Կանոն գիրք, ձեռամբ յոգնամեղ եւ փծուն սուտանուն Կարապետիս, ի գեօղն Սեպ, ընդ հովանեաւ Սուրբ Աստուածածնին եւ Սուրբ Քրիստափորին. ի թվականիս մեր Ռէգ (1624): Տէր Աստուած բարով վայելել տացէ քաջ եւ արի մեծ բարունապետ Կարապետին: Արդ յերեսս անգեալ եմ հող եւ մոխիր, ով դասք վարդապետաց, վասն Աստուծոյ անմեղադիր լերուք ի խոշորութեան եւ ի սխալանացս, զի կարն մեր այս է»։

4. Էջ 93. «Թվին ՌԶԲ (1633) գրեցաւ»

5. Էջ 102-103. Ստորին լուսանցքներուն վրայ. «Աւգնեա' ինձ Հոգի Աստուծոյ, եւ զգործս ձեռաց մերոց ուղիղ արա ի մեզ, Տէր. զգործս ձեռաց մերոց յաջողեա' մեզ»։

6. Էջ 118-119. Ստորին լուսանցքներուն վրայ. «Ով կարդացող այսմ մատենիս, ատենախօս դատաստանիս, չմեղադրես գլրիս, թէ խիստ խոչոր է գիր տողիս, զի յայս տէտրէս խաբար չունիս, թէ ճարտարգարն որ ի միջիս, խափան գործեաց զարուեստ գրչիս: ՌէԱ (1622):»

7. Էջ 134. «Ով արք աստուածասէր եւ հոգենորհք, եթէ ով ոք կամի դատաւոր լինել աշխարհի, պարտ է այսու օրինօքս եւ նախազիծ մատենօքս դատել, եւ անպատիժ մնալ եւ անբանբաս յԱստուծոյ եւ ի մարդկանէ, եւ կեցուցանել զոգի իւր յաւուրն անաշաւ դատաստանին Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի. եւ մեղապարտ գծողիս ասացէք Տէր ողորմեա»։

8. Էջ 147. «Զանապատու ի բարեաց եւ զլրացեալս ի չարեաց, զմեղօք մեռեալ Գրիգոր սուտանուն քահանայ, որ զանունս ունիմ միայն եւ ի գործոցս ունայն եւ թափուր գտանիմ, աղաչեմ յիշել ի Տէր, եւ Աստուած զձեզ նոյնպէս յիշէ: Եւ վասն նօտր վասնահամար գրիչ անմեղաղիր լերուք, զի օրինակ կարի վատթարագոյն գիր էր եւ գծուամաց, եւ մեք վասն այն՝ այսպէս նօտր գրեցի, զի զմէկ բան տասն անգամ հայ(է)ի եւ ապա գրէի. ողջ լեր: Թվին ՌէԱ (1622):»:

9. Էջ 146-147. «Որք հանդիպիք այս մատենիս, ատենախօս դատաստանիս, վայ ասացէք այս գծողիս, որ խաւարաւ լոյս իմ աչիցս, մէկիկ որդեակս իմ մեռաւ. այլ չի բռնէ ձեռս զգրիչս, դուք հայցեցէք ի Սուրբ Հոգւոյն, զի մխիթարէ միշտ զեղկելիս: Վայ, վայ, վայ որդեակ»:

10. Էջ 193. «Զբազմավէր հոգիս ի նետից բանսարկուին գԴրիգոր սուտ անուամբ կոչեցեալ քահանայ եւ գործով ունայն, զգծող տառիս, աղաչեմ յիշել յողորմութիւն Աստուծոյ, զի ձեզ դիւրին է կենդանեացդ եւ ինձ յոյժ պիտանի. Եւ Աստուած յիշողացդ ողորմեսցի. ամէն: Գրեցաւ ի թվին ՌէԱ (1622) ամին, ի քաղաքս Հիգան, ի մեծ խոցի տարին, որ է ի բոլոր արարածս, եւ եմք ամենեքեան ի յահէ իբրեւ զիելագար, զի յերեկոյին անկանին եւ ի կանուխն մեռանին»:

11. Էջ 196. Խոշոր եւ անկանոն նոտրգրով. «Ես Տէր Ակոր Էզրնկացի, որ եմ ի գեղչէն Մըրլնցի, այս տուբըս ընդցցի հառայչեցի եւ լացի, փլտեալ ծերունիս գայս գրեցի, մի է Աստուած ինձ ողորմի, ի ապայգայ ժամանայկի, ձեռս երթայ գիրս մընայ, մարմի(ն)ս ունայն ի հող գառնայ: Թվին ՌէԱԳի (1694): Ես անարժանըս ողորմին ասացի եւը դուք ասայցէք»:

12. Էջ 249. «Հնդ պետին իմոյ վարժից անուան, եւ զիմ հայցեմ գլծել ի գրողէտ զանուն յանցաւոր տառի, զի եւ գքոյդ յանվախճանն գրեսց Տէր: Նաեւ զիս զբազմավէր հոգիս Զգրիգոր Հիգանցիս զգծող տառիս, որ յետինս եմ ի գրչաց եւ տրուալ ամենայն արուեստաւորաց, աղաչեմ զհանդիպողքդ զմիով Ողորմիւ արժանաւորել զհոգի իմ. Եւ Տէր նոյնպէս ձեզ ողորմի»:

13. Էջ 402. «Տէր Աստուած վայելել տացէ զայս գիրք Կարապետ վարդապետին. ամէն: Փառք Աստուծոյ Հօր անծընին, եւ ծոցածին Ողոդի նորին, եւ Սուրբ Հոգւոյն համապատուին, փառաւորեալն երրեակն ի մին, որ զօրութիւն ետ տկարին, փցուն գրիչ Գրիգորին, հասնիլ ի վերջ սկսեալ տառին, ատենախօս դատաստանին, զոր հրամանաւ վարդապետին, արի եւ սուրբ ժիր մշակին, զոր Կարապետ անուն կոչին, այսմ գլրոց ստացողին: Սա յանդ եկ(ա)լ ի մեծ թվին Ռ եւ Հ եւ մին (1622), ի մեծ յերկիր եւ յանուանին, Հիգան կոչի ի հայ բառին, ընդ հովանեաւ Յարութեմին եւ Սրբուհոյ Աստուածածմին եւ Ցովաննու

Կարապետին եւ Գէորգայ զօրավարին, Սուրբ Ստեփանոս Նախավկային եւ Սուրբ Սարգսի եւ որդւոյ նորին։ Զձեզ աղաչեմ զամենեսին, որք հանդիպիք այսմ գրին, զմեզ յիշեցէք միշտ բարին զԳրիգորս Հիգանցին, որ ես զայս գիրքս գրեցի Տէր Կարապետ վարդապետին։ դուք որ կարդայք զբանս ի շարին, ինձ եւ նորա տո՛ւք զՌողորմին։ ամէն։ Թվին ՌՀԱ (1622)»։

## 88

## ԺՈՂՈՎԱԾՈՅՑ

(ԺԷ. Դար)

Թերթ՝ 166: - Մեծութիւն՝ 15x20: - Գրութիւն՝ երկսիւն: - Նիւթ՝ թուղթ: - Գիր՝ նոտրդիք վարժ: - Տող՝ 23: - Մանրանկար՝ չկայ ամենեւին: - Խորամ՝ միայն հատ մը, բնագրին սկիզբը, թղ. 2ա, կարմիր կապոյտ գոյներով, ճաշակաւոր: Ունի նաեւ իր լուսանցազարդը: - Գրիչ եւ այլ տեղեկութիւններ կը պակսին, որովհետեւ զուրկ է Յիշատակարանէ: Կազմ՝ կաշեպատ խաւաքարտ, իւրաքանչիւր երեսի կեղրոնը ձուաձեւ ծաղկադրոշմով, արարական կամ պարսկական կազմի նման: Ա. կազմին վրայ հորիզոնաձեւ չորս տող արարատառ գրութեան հետքեր՝ սեւ մելանով: Ներսէն լաթով չէ պատուած, այլ ուղղակի մագաղաթ գրչութեան մը պահպանակը կպցուած, թէեւ այժմ բոլորովին բաժնուած: Կազմին կոնսակի վերի եւ վարի մասերը մէկ մէկ մատնաչափ պոկուած են, ցոյց տալով կազմակապերը: Ունի թերթափակ: - Պահպանակ՝ մագաղաթ երկաթագիր մեծածաւալ աւետարանի մը մէկ թերթը կիսուած եւ վարի մասը սկիզբը եւ վերի մասը գրքին ծաւալով երկծալ թերթերու ծալուած: Պահպանակին պարունակութիւնն է Ղկ. 24-30: - Հանգամանիք՝ լաւ, թէեւ չատ գործածութենէ կազմը տկարացած: - Մանօթութիւն՝ «Գնած եմ ուրիշ ձեռագրի հետ Գահիրէ, 1966ին, ուր պանդոկ բերած էին հայ այր ու կին մը, ծախելու նպատակով»:

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

1. Թղ. 2ա. «Մեկնութիւն տումարի, զոր ասացեալ է Սամուել Քահանայի, ի խնդրոյ Ստեփանոսի իմաստասիրի. Տումար ասի ժողով սկիզբն աստեղաբաշխութեան, եւ ի նոցանէն զատեալ զայս երկուց լուսաւորացս»:

2. Թղ. 4ա. «Յաղագս թուականին Հռովմի. Ամենայն թուականք ազգաց զառաջադրութեան իւրեանց ցուցանեն որ առաջ քան զհայոցն»: Կը յաջորդեն 4-5 տողնոց գրութիւններ, սա խորագիրներով. «Վասն կրկնակաց». «Վասն կիսակաց». «Վասն մեծ յարակայի». «Յաղագս միջնայի յարակայից». «Վասն փոքր յարակայից». «Յաղագս երբայցի յարակայից». «Յաղագս վերադրաց»:

3. Թղ. 9ա. «Սուրբ վարդապետին Յովիաննու, որ եւ Սարկաւագ կոչի. Եթէ կամիցիս Աղամայ յելանելոյն ի դրախտէն գիտել զժամանակ կալ»:

4. Թղ. 10ա. «Նորին Յովիաննու քահանայիցքն զդրութիւն իւրեանց տումարին. Յառաջնումն ամի թագաւորութեանն Փիլիպպոսի արքայի հազար ամ լցաւ»:

5. Թղ. 11բ. «Նորին Յովիան(ն)ու. Յորժամ ըստ (Յ)ունաց տաւնախմբութեան զպապանձումն Զաքարիայի եւ (յ)ըղութիւն»:

6. Թղ. 13ա. «Յովիան(ն)ու քահանայի յաղագս տաւնից եւ Դժ(չորեքտասան)երորդաց լուսնոյ զատկաց. Ախմարաց եւ ոչ քաջահմուտ արանց կարգուածդ երեւին ըստ հայ ամսոց»:

7. Թղ. 16ա. «Յովիան(ն)ու, վասն էր սկիզբն վերադրաց եւ չորեքտասաներորդ լուսնոյ կամ հնգերեակ եւ վեցերեակ ի չորիցն Ապրէլի փոխեալ յերկուցն. Ասացուք համառաւուիւ սակայն ճշմարիտ լրումն առաջին»:

8. Թղ. 17բ. «Յովիան(ն)ու քահանայի յաղագս եղանակ եւ տաւնից եւ քանիաւնութեան ամաց դիպանութեամբ ի նոյն տեսութիւն. Զնախնեաց կարծիս եւ ասացուածս ի ձեռն քննութեան եւ երկասիրութեան»:

9. Թղ. 21ա. «Հարցումն Եւսերի ժամանակագրի առ Անաւտալի եպիսկոպոսի. Ընդէր տարին յկե (365) աւր է. պատասխան. այս ըստ մարդոյն կարգեցաւ, վասնզի աշխարհ բանական է»:

10. Թղ. 24ա. «Թուականաւ Շ. եկին թոյք էին. Յորելեան Շ ամ է որով հրեայք վարին եւ արայ այսպէս»:

11. Թղ. 27բ. «Յովիաննու վարդապետի որ մականուն Կողենն ի խնդրոյ Աւանիայի աշակերտաց եպիսկոպոսի վասն գիտելոյ զպատճառ վերաբերելեաց կամ ի բաց տանելեացն թուականին եւ այլոց ամենայն. աւգնէ Յիսուս Քրիստոս. Առաջին զի այս Հ. թիւ հանապազ»:

12. Թղ. 29ա. «Յաղագս երից ժամուց. Սա կոչի նահանջ որով առաջ խաղան յեղականք»:

13. Թղ. 29ա. «Յաղագս աստեղացն ցուցակի են. Զոհալն որ կոչի երեւակ»:

14. Թղ. 31ա. «Նորին Յոհաննու. Ասացաք յառաջագոյն թէ զիարդ բաժանեալ են կարծիկք երրայեցցն եւ հոռոմոցն»:

15. Թղ. 35ր. «Այս են պատմագիրք. Յաւուրս Մովսէսի մարգարէին եւ Յեսուայ անխափան տաւնեցաւ յիսրայէլի զատիկ»:

16. Թղ. 38ր. «Արտակարգածիոնի ընդդէմ Նևերի. Յորժամ յաշագս տաւնից Հարցափորցութիւն եղեւ յառաջի թագաւորին»:

17. Թղ. 38ր. «Ընդդէմ Իրոնի գրեալ. Խելաթափ Իռոն ամենայն ումեք յայտնի է»:

18. Թղ. 39ա. «Անդրէաս երրայր Մանկնոսի եպիսկոպոսի. Ուստի բազում յեղանակաք եւ ազգի ազգի զարմանազանութեամբ»:

19. Թղ. 40ր. «Անդրէասա(յ) մեծի վասն սրբոյ պատէքէին յետ եւ առաջ խաղալոյ եւ վասն դրութեան երկերիւրեկին. Քանզի բազումք յասորոց աներկիւղ յամառութեամբ կարծեցին»:

20. Թղ. 44ր. «Յաղագս ըստ Հոռոմոց ամսոց եւ չորեքտասաներորդին լուսնոյ զատկաց եւ փոփոխմանց իրաց եւ արակայից. Զթուականէն յանուանեցելոյն թէպէտեւ ոմանք ըստ կարծեաց»:

21. Թղ. 49ա. «Յովհաննու քահանայի յաղագս իննուտասնեակ ամաց. Ի տգիտաց ոմանք տարակուսեն յաղագս զիննուտասն ամաւք յառաջ»:

22. Թղ. 51ր. «Յոհանն(ն)ու քահանային. Այլ թէպէտեւ հոլովս յառաջնոցն սրբոց զասացեալսն...»: - «Յոհաննու քահանային. Ըստ երրայեցւոց հնագիտաց եւ մարգարէից ոմանց ի չորս ամսոյն»:

23. Թղ. 55ր. «Զհուտ գիտնականի ումենին ասացեալ վասն աւուր չարչարանաց Տեառն. Թուականին որ Աղամայ ե՛ն ե՛ձ Ա (5501) ամին ծընօ Քրիստոս»:

24. Թղ. 56ր. «(Անվերնագիր). Եթէ ոք զեեզ Հարցանէ վասն եռեսնամեայ ժամուց լուսնի կալ զաւուրս լուսնին»:

25. Թղ. 58ր. «Գէորգայ վարդապետին բան վասն կանուխ եւ անագան լիմելոյ զատկին. Դիցուք սուղ ինչ եւ վասն տէրունական լրմանց»:

26. Թղ. 61ա. «(Անվերնագիր, աղիւսակի մը ստորեւ կայ). Կալ զմեծ թուականն Զ (80)... Յորժամ մտանէ զոհալն ի խոյն լինի արեան հեղութիւն եւ շատն»:

27. Թղ. 63ր. «Սարկաւագին. Ի քսան ամէն Կոստանդիանոսի մինչեւ ի դիր»:

28. Թղ. 68ր. «Վասն որոտմանց ի վերայ լուսնին որ լուսին ի կենդանակերպն լիմի զինչ է. Եթէ լուսնի խոյն լինի եւ որոտայ կանաչ բազում լինի»:

29. Թղ. 69ա. «Վասն աղեղան որ ասեն գաւտի. Յորժամ աւուրս խոյի աղեղն իջանէ յարեւելս»:

30. Թղ. 70ա. «Յաղագս բակի լուսնին. Յաւուրս խոյին լուսին բակ առնու յերկար»:

31. Թղ. 70բ. «Վասն խաւարման լուսնին. Յորժամ աւուրս խոյին խաւարի լուսինն թէ ինչ նշան ցուցանէ»:

32. Թղ. 71բ. «Յաղագս տանուտերաց տարւոյն. Յորժամ համալն մինի այս է ի լէ՛ բարելացոց»:

33. Թղ. 76բ. «Արոկիլայ ասացեալ վասն կաղանդաց. Եթէ կաղանդն ի կիւրակէ լինի»:

34. Թղ. 77ա. «Երանելոյն Դանիէլի մարգարէին ասացեալ վասն նշանաց յերկինս յարեգակն եւ ի լուսինն, յորոտն եւ ի շարժն եւ ի կայծակն եւ եղջիւրքն, լուսին, ի խաւարի արեգակնն եւ լուսնի եւ բակ առնուլ եւ վասն աղեղան իշանելոյ, առ ի նշան չարոյ եւ բարոյ որ իմանան մարդիկն եւ զգաստանան ի պատուիրանն Աստուծոյ եւ երկիցն ի Տեառնէ, նախ գուշակ լինելով յերկեղ Աստուծոյ եւ արացեն զամենայն ինչ իմաստութեամբ. Ի նաւասարդի թէ լուսինն խաւարի շատ ձիւն գայ»:

35. Թղ. 83բ. «Վասն փառաւոր պատեղաց որ անկանին թէ զինչ գուշակեն. Յորժամ տեսանես մեծ եւ փառաւոր աստղ որ ցոլանայ»:

36. Թղ. 94ա. «Յաղագս շրջագայութեան երկնից թէ որպէս իմաստանափարացն բուեցաւ. Գործք Աստուծոյ մեծամեծք են ասէ իսրայէլի թագաւորն Դաւիթ»: Ունի ա - խ ստորաբաժանումներ, իւրաքանչիւրը իր կարգին կարմրատառ խորագրով:

37. Թղ. 127ա. «Յանունն Աստուծոյ ողորմածաց ողորմածին, խաւսք Անդրիասա(յ) իմաստաց իմաստափրին, գիրք երկրորդ, իր նշանաց յեղանակաց որ ի յերկինս եւ ի յերկրի լինեցին գիրք յիշատակարանաց. Յորժամ արեւն ի խոյն լինի եւ խաւարի՝ գուշակէ ահ եւ հիւանդութիւն»: Ունի ա - ժբ ստորաբաժանումներ, իւրաքանչիւրը իր կարգին ունի կարմրատառ խորագիր:

38. Թղ. 134ա. «Ճանուսերացոյց զոր ասացեալ է Անդրէասայ. Յորժամ խոյն լինի տանուտէր գարուն ազնիւ ցորենոյ»:

39. Թղ. 135բ. «Կաղանդացոյց հոռոմ տարենմտին. Թէ կիրակի հանդիպի տարեմուտ հոռոմոց»:

40. Թղ. 135բ. «Եթէ կամիցիս գիտել զտարեն եղանակն. Կալ զհայ զթուականն»:

41. Թղ. 136ա. «Յաղագս աստեղացն որ ցոլանան յերկինս. Յորժամ յարեւմտից յարեւելս ցոլանայ»:

42. Թղ. 136ա. «Յաղագս որոտմանց եւ այլ նշանաց. Յորժամ գարունն առաջին ամպն»:

43. Թղ. 136ր. «Տանուտէր տարւոյ այսպէս արա. Կալ զտանուտէր տարւոյն յորում ես»:

44. Թղ. 137ա. «Յաղագս խաւարման արեգական եւ լուսնին. Յորժամ հոռոմ վերադիրն թ (9) լինի արեւն խաւարի»:

45. Թղ. 146ա. «Յաղագս երկնային շարժմանն նուաստ Յովիաննիսի Եղնկայեցոյ շարադրեալ յիմաստնոցն քանից, ի խնդրոյ քարեպաշտ եւ երկեղազարդ պատանոյն Պարոն Վախթանկայ. Ամենայն ոք որ զբան որ է ծնունդ անմարմին»:

46. Թղ. 156ա. «Մեկնութիւն սուրբի գոր արարեալ է սուրբ վարդապետին Յովիաննու մականուն Կողենն կոչեցեալ. Արդ վասնզի Յարաց ամսոյ և (30) հանդիպեցաւ զնել զթիւ թվականութեան ազգիս հայոց». (Հրտ. Հանդէս Ամսօրեայ, 1967, թիւ 1-3, էջ 9):

47. Թղ. 157ա. «Պատմութիւն սուրբ եւ առաքինասէր կրա(ւ) նաւորին եւ նգնազգեաց միակեցին Յովսեմոսի, որ խորհեցաւ զմտաւ էած երբալ յերկիրն երանելեաց. Աւգնեայ, սուրբ Աստուած զսկեալս դու կատարեայ. Երանելին Յովսեմոս յաղաւթս եկաց առ Տէր եւ ասէ»:

48. Նոր նոտրգրով բնագրին մէջ կան միաէջ զանազան գրութիւններ՝ հետեւեալ կերպով.

Թղ. 1ա. «Յիսուսի Քրիստոսի ծառայ Տէր այս անուն կաթողիկոս ամենայն հայոց եւ պատրիարդ այս անուն լուսակառոյց»:

Թղ. 126ր. «Թէ կամիցիս գլուխ վիշապին մուտ առնել թէ հայոց թվականաւ»:

Թղ. 166ր. «Արդ եթէ կամիցիս գիտել սաղմոսովն յոր (յ)այտնէ երազն»:

## ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ

1. Առջեկի պահպանակին երկրորդ քերքին վրայ, գնագրէն տարբեր գրչութեամբ կայ հետեւեալը. «Թվին ՌՃԹԼ (1660) մեղուցեալս ծնաւ»:

2. Թղ. 1ր. Նոր գրչութեամբ. «Ի թվին Հայոց ՌՃԽԶ (1697) եւ ամիսն Փետրուարի Զ (6) ծնաւ Աքրահամ որդիսն: Եւ ի թվին ՌՃԽԹ (1700) եւ ի ամիսն Սեպտեմբեր Բ (2) երկուշաբթի գիշեր ծնաւ որդիս Վարդիսարունն»:

Բնագրին գրչութեամբ են հետեւեալները.

3. Թղ. 27ր. «Վայ ինձ եղկելոյս, ի հրաժարել յինէն հոգոյս, զի հեղքացայ ի կենցաղոյս, եւ կատարեալ զկամս մարմնոյս, մեղութ կոչեալ եմ ես ան(յ)ոյս, Հոգիս ի մահ է այս գերոյս, լուր Տէր ձայնի պաղատելոյս, տո՛ւր ճանապարհ մոլորելոյս»:

4. թղ. 2ա. «Եւ զիս զմեղաւորս յիշեայ ով պատուական հայր սուրբ»:

5. թղ. 1ա. «Ով հայր սուրբ երբ զայս ընթերհցիս, յիշեայ զգծաւուի քո սուրբ աղօթիւքդ»:

## 89

### ԺՈՂՈՎԱԾՈՅ

(1304Էն առաջ)

Թերք՝ 147: - Մեծութիւն՝ 13×17: - Գրութիւն՝ միասիւն: - Նիւթ՝ թուղթ հին: - Գիր՝ բոլորգիր, նորոգուած մասերը նոտրգիր: - Տող՝ 26-27: - Խորան՝ թղ. 19ա, միագոյն եւ շատ նուրբ, վարժ ձեռքի արդիւնք. ունի իր լուսանցազարդը եւ բնագրին առաջին չորս տառերը (ՍՏԵՓ) զարդագիր: - Գրիչ, Ստացող՝ կը մնան անծանօթ: - Տեղի՝ հաւանաբար կիլիկիա: - Կազմ՝ տախտակ կաշեպատ, շատ պարզ գրումազարդերով. ներսէն հաստ տեղական բամպակեայ կանաչագոյն լաթով ծածկուած է: Կազմը տոկուն է, հաւանաբար ժլ. դարուն սկիզբէն: - Հանգամաննէ՝ հին եւ գործածուած, բայց լաւ վիճակի մէջ պահուած: Անտարակոյս վերջին կազմութեան ատեն փրկուած փճացումէ: Խոնաւութեան հանդիպած է անցեալին. թերթերուն վերի մասերը կամ մաշած կամ վերակազմութեան ատեն քիչ մը կտրուած են: Նորոգութեան ատեն աւելցուած եւ բնագրէն տարբեր գրչութեամբ են՝ թղ. 1ա-17թ, 96ա-107թ, 128ա-134թ: - Պահպանակ՝ սկիզբը երկութերթ, որ նախկին երկսին երկաթագիր աւետարանի հատուած մըն է. երկրորդ երեսին լուսանցքին վրայ մանր երկաթագրով գրուած է. «Տէր մեղայ քեզ Քրիստոս Որդի Աստուծոյ. եւ զոր կերայ շահեցայ եւ զոր ետու գտի»: Պահպանակը կը պարունակէ մասեր Յովհաննու աւետարանէն. ժ. 33 - ԺԱ. 9 միջոցի մասեր: Ժամանակ՝ «Գրչութիւնը տումարին կրնայ նոյն իսկ հեղինակին Ստեփաննոս իրիցու տումարագիտի որդւոյ Յոհանիսի քահանայի՝ գրչութիւնը ըլլալ: Ամէն պարագայի տակ թղ. 91ա ներքեւը ՇԾԳ (1340) թուականէն առաջ գրուած պէտք է ըլլայ»: - Մանօթութիւն՝ «Ձեռագիրը ինծի դրկուած է Պոլիսէն, 1928ին եւ գնուած է Զարդարեանէն, 15 տոլարի»:

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Նախ կու տանք իին բնագրին բովանդակութիւնը (1-7) եւ ապա նորոգողին կողմէ աւելցուածը (8-17):

1. Թղ. 18ա. «(Անվերնագիր). Առաջին արարչութեան. ա. երկինք, բ. երկիր, գ. հող...: Այս իր (22) գործք Աստուծոյ եւ իր (22) գիրք. ա. Ծնունդք, բ. Ելք»:

2. Թղ. 18բ. «Յաղագս ընթացից արեւու իր (28) ամաց եւ շրջագայութեան լուսնի...ամենայն ամք քուով ՇԼԲ. Զթուական արեգական եւ լուսնի այսպէս իմացիր»:

3. Թղ. 19ա. «Ստեփաննոսի իրիցու տումարագիտի որդուոյ Յոհանն (ն)իսի քահանայի ասացեալ յաղագս ընթացութիւն արեգական. Արեգակն իր (28) ամաց եւ շրջագայութեան լուսնին թժ(իննեւտասն)եակ ամաց, որ լինի միահամուռն ընդ ամենայն ամք թուով ՇԼԲ»:

4. Թղ. 86ր. «Վասն որոտմանց ի վերայ լուսնի թէ լուսինն յոր կենդանակերպի է. Եթէ լուսնի խոյն լինի եւ որոտայ կանաչ բազում լինի»:

5. Թղ. 92ր. «Կաղանդացոյց. Եթէ ի կիրակի լինի կաղանդն»: - Թղ. 93ա - 95բ կը հետեւին տոմարական աղիւսակներ եւ անվերնագիր բացատրութիւններ:

6. Թղ. 108ա. «Դաւթի Մեծի յաղագս էակաց. Ի քանիս բաժանի էակն եւ յորս»: - Միջանկեալ թղ. 123ա. «Ի սահմանացն Պորիկիւրի յաղագս բնութեան որ ի գոյութեան. Բնութիւն ասի որ ըստ բազմաց եւ տարբերութեանց»

7. Թղ. 135ա. «(Բովանդակութիւնք աստուածային վկայութեանց. Տունս ՄԵԸ, ընթերցուածս Գ, գլուխս Գ...)»: Անխորագիր, սկիզբն ու վերջը պակասաւոր թուղթի անկումի պատճառով: Գրութեան վերջին հատուածին խորագիրն է. «Խսկ ի Փիլիպեացւոցն եւ ի Կողոսացւոցն եւ ի Թեսաղովմիկեցւոցն...ի յերրայեցւոցն թդին վկայութիւնք և (30). Ա. ի Բ. սաղմոսէն. Որդի իմ ես դու»: Կ'աւարտի իե վկայութեամբ, մնացածը կորսուած է:

8. Թղ. 1ա. Նոր նոտրգրով (Մասն քծշկարանի). «(Ա)ռաջին օրն լուսնի արիւն առնոու չէ լաւ քոսոտի»:

9. Թղ. 2ա. Նորագոյն շեղագրով. «Այսօր բարբառ աւետեաց ի լսեցիս մեր»:

10. Թղ. 3ա. Հին բոլորգրով, տարբեր բնագրէն. «Նշանագիրք անուանց կարնարանութիւն. Աբրահամ...Ահարոն...Ամբակում...», իւրաքանչիւր անուանի դիմաց կը դնէ համառութեան նշանը:

11. Թղ. 7ա. Նոր նոտրգրով. «(Բառք Վարդան գրոց). Զանիանաքէն, զանկողոպտէն, նորին բան, ի հարուածս, ի չարչարանս»:
12. Թղ. 8ա. Նոր նոտրգրով. «Շաղկապ է. Եթէ, զի, ոչ, ինչ»:
13. Թղ. 9ա. Հին բոլորգրով. «ՅԱղամայ մինչեւ ի ջրհեղեղն են ամք Սնինք, ի ջրհեղեղէն մինչեւ յաշտարակն Շի»:
14. Թղ. 10ա. Նոր նոտրգրով. «Բառեար յունաց ի մերս թարք-մանեալ. Անգեցել, յանդիման կացուցանել. Անարգատիպ, անձեւ»:
15. Թղ. 11ա. Նոր նոտրգրով. «Հոռմայեցւոց տումարի պատճեն արարեալ է այս Ղուկաս Կեղեցւոյ. Պատճէն Հոռմայ մեծ տումարի, պարզեալ հարանցն մեր նախկի, բայց արդ Ղուկասս Կեղեցի, ոտանաւոր շարադրեցի»:
16. Թղ. 96ա. Նոր նոտրգրով. «Յաղագս չորեխտասան աստիճանաց. Հաւատամք թէ է Աստուած եւ մի է Աստուած»:
17. Թղ. 128ա. Նոր նոտրգրով. (Տոմարական բանեֆ. անխորագիր). (b) գիտելի է զի բաժանեալ են իմաստունքն զերկինքն յժմ (12) կենդանակերպ, L (30) աստիճան, Կ (60) թաղիթայ»:

## ՑԻՇԱՏԱԿԱՐԱՆ

Բնագրին գրչութեամբ են.

1. Թղ. 30ա. «Զսակաւ գրիկս որ կարդա, Տէր ողորմեա' ինձ եւ նմա»:
2. Թղ. 86ա. «Փառք քեզ Քրիստոս Աստուած իմ, որ արժանի արարեր զիս հասանել ի վերջին գիծ տումարիս: Գոհութիւն քեզ երրորդութիւն սուրբ. ամէն»:

Նորոգողին գրչութեամբ է.

3. Թղ. 17թ. «Ամենամեղ անձն իմ գերի, զիս յիշեցէք այսմ վայրի, զնիկողայոսս ողորմելի, գծող ծրիս յոգնամեղի»:

## ԽՈՐՀՐԴԱՏԵՏՐ

(1679 թ.)

ԹԵՐԲ՝ 26: - ՄԵԾՈՒՔԻՒՆ՝  $18 \times 24$ : - ԳՐՈՒՔԻՒՆ՝ երկսիուն: - ՆԻՒՔ՝ ԹՊՈՂՄ ՄԵՂԱԿԱՆ: - ԳԻՒՐ՝ բոլորգիր: - ՏՈՂ՝ 20: - ՄԱՅՐԱՅԼԿԱՐ՝ թղ. 1ք՝ միաէջ պատարագի մանրանկար մը, ուր կայ թագաղիր պատարագիչ եպիսկոպոսը, որու կողքին կան երկու քշոցավիր, մէկ բուրուառակիր, մէկ գաւազանակիր սարկաւագներ, եւ երկու դպիրներ, մին ծնծղաներով եւ միւսը բաժակը ձեռքին: Թղ. 2ա՝ ոսկեխառն խորան եւ ամբողջ էջին երկայնքին լուսանցազարդ մը: Լուսանցազարդի ձեւով կան՝ թղ. 4ք. կուլակաւոր եպիսկոպոսը ծնրագիր, թագը իր ոտքերուն. թղ. 12ք՝ սարկաւագը սկիհը ձեռքին, վերաբերումի պահուն. թղ. 13ք՝ պատարագիչը վերաբերումի պահուն: Գրեթէ ամէն էջի վրայ կայ լուսանցազարդ եւ առատ են զարդագրեղը, բոլորն ալ նուրբ եւ ճաշակաւոր: - Գրիչ՝ Յովսէփ: - Տեղի՝ Սպահան: - Ստացող՝ Փարաս եւ իր կինը Աւետում: - Կազմ՝ ստուարաթուղթ, կարմիր կաշիով ծածկուած. պարսկական արուեստով կողքերուն կեղրոնը ոսկեղրուագ ճնշուած: Ներսէն թղթապատ: Չունի նախնական կազմ: - Հանգամանք՝ մաքուր եւ կատարեալ: - Մանօրուքիւն՝ «Գնած եմ Փառք Պէրնէ աճուրդատունէն, նիւ Եորք»:

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Թղ. 2ա. «Որ զգեցեալ ես զլոյս որպէս հանդերձ Տէր մեր Ցիսուս Քրիստոս»: Թղ. 15ք. «Անեալ զիացն ի սուրբ յաստուածային յանման յանարատ եւ յարաքագործ ի ձեռն իւր... Առէք կերայք այս է մարմին իմ»: Թղ. 18ք. «Եւս առաւել զեպիսկոպոսապետն մեր եւ զՏէր Խաչատուրն չնորհեսցես մեզ ընդ երկայն աւուրս ուղիղ վարդապետութեամբ»: Թղ. 25ա. «Որ աւրհնես զայնոսիկ որք աւրհնեն զքեզ Տէր»:

## ՑԻՇԱՏԱԿԱՐԱՆ

1. Թղ. 26ա. «Փառք ամենասուրբ երրորդութեանն Հօր եւ Որդոյ եւ Հոգւոյն սրբոյ, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից ամէն: Արդ գրլւեցաւ սուրբ խորհրդատեսորըս Ասպահան, եւ ի դուռն Սրբոյ Յոհաննիսի, եւ ի կաթողիկոսութեան Տեառն Յակորայ, եւ ի թագաւորութեան Շահ Սուլեմանին, եւ յառաջնորդութեան մերոյ Դաւիթ Եպիսկոպոսին, ի թուականին մերոյ ՌՃիլ (1679), ի յամսեանն Սեպ-

տեմբերի, ի ձեռն հող եւ մոխիր տրուփ Յովսէփին: Եւ ետ գրել հեղահոգի եւ բարեմիտ Փարասն, ի յիշատակ իւրն եւ հեղահոգի կողակցին իւրոյ Աւետումին, որ է հանգուցեալ առ Քրիստոս:

«Դարձեալ յիշեցէք Փարասն, որ ետ գրել ոսկով եւ լազվարդով, իւրն յիշատակ եւ լուսահոգի Աւետումին, եւ իւր որդոցն եւ դատերացն, յիշեցէք եւ Աստուած ողորմի ասացէք, եւ Տէր Աստուած ձեզ ողորմեսցի ի միւսանգամ գալստեանն իւրում. ամէն: Հայր մեր որ յերկի (նս):»:

- 2. Թղ. 8ա. «Փարասն յիշէ՛»:
3. Թղ. 8բ. «Փարասն յիշէ՛ ի Տէր Աստուած»:
4. Թղ. 13ա. «Փարասն յիշէ՛»:
5. Թղ. 14ա. «Աւետումն յիշէ՛ առ Աստուած»:
6. Թղ. 14բ. «Փարասն յիշէ՛ ի սուրբ յաղօթս քո»:
7. Թղ. 16բ. «Փարասն յիշէ՛ առ Աստուած»:
8. Թղ. 22ա. «Փարասն յիշէ՛ ի սուրբ յաղօթս քո»:
9. Թղ. 25ա. «Աւետումն յիշէ՛ առ Աստուած»:

## 91

### ԿԱՆՈՆԱԳԻՐՔ

(1624 թ.)

Թերթ՝ 202: - Մեծութիւն՝ 15×20: - Գրութիւն՝ երկսիւն: - Նիւթ՝ թուղթ ջրանիշ եւրոպական: - Գիր՝ նոտրգիր վարժ: - Տող՝ 24: - Կիսախորան՝ երկու հատ, թղ. 1ա եւ 7ա, իրենց լուսանցազարդերով եւ թոչնազգերով, կարմրագիծ եւ սովորական ոճով: - Գրիչ՝ հաւանաբար Աստուածատուր սարկաւագ կամ դպիր: Տեղի՝ Հալէպ: - Ստացող՝ մահատեսի Խաչատուր: - Կազմ՝ դրոշմազարդ շագանակագոյն կաշի՝ տախտակի վրայ: Առաջին կողքին արտաքին եգերքը մաշած եւ պատռած. կոնակի վարի մասը մատնաչափ պոկուած, որով կազմաթելերը կ'երեւան: Փակակապերը եւ ճարմանդները կորսուած են: Ունի էջանգոներու դրոշմազարդ կաշի պահպանակը: Ներսէն կողքերը ծածկուած են մարած բաց նարնջագոյն նրբահիւս անզարդ մետաքսով: - Համգամանի՛ լաւ. վերջին թերթ մը պակաս, որոշ կերպով կտրուած եւ հանուած: - Մամօքութիւն՝ «Գնած եմ 2 Յունիս 1942ին, նիւ եռք, պարսիկ (Պապի աղանդէն) Մոթահետէ հնավաճառէն»:

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

1. **Թղ.** 1ա. «Ա. Կանոն առաջին վասն ժառանգութեան: Բ. Վասն որք յանկարծակի մեռանին եւ ոչ գրեն կտակ»: ցանկ Ա - ՃՇ կանոններու: **Թղ.** 7ա. «Կանոն առաջին վասն ժառանգութեան. Այր ոք եթէ մեռանի եւ ոչ գրէ կտակ եւ թողու որդիս»:

2. **Թղ.** 31ր. «Նախադրութիւն գրոց դատաստանաց (Միջիբարայ Գոշի)» (Ցանկ): **Թղ.** 32ա. «(Հ)անդերձեալ եմք գրել զգիրքս դատաստանիս»: **Թղ.** 47ր. «Սկիզբն դատաստանի եւ թիւ գլխոց ի կարգի»: ցանկ Ա - ՄՇ կանոններու: **Թղ.** 52ա. «Ա. Եկեսցուք այժմ ի գործ դատաստանի, գիտելով զի ըստ քաղաքաց»: **Թղ.** 140ա. «Վասն աւարի վաճառացն. Վաճառեալ եւ գնեալ զաւար ոչ դարձցի»:

3. **Թղ.** 140ր. «Խրատ կանոնական համառաւտ (Պլուզի)»: ցանկ Ա - Միջրատներու: **Թղ.** 141ր. «Նուաստ վարդապետ Յոհաննես Եզնիկեցոյ խրատ հասարակաց քրիստոնէից, բահանայից եւ ժողովրդոց, ի կամոնական սահմանաց առաքելոց, սրբոց հարապետաց եւ վարդապետաց. եւ հօրն մերոյ Վարդան վարդապետի, յոր ամենայնի ժողովցի եւ գրեցի. Ամենազօր թագաւորին մերոյ Քրիստոսի»:

4. **Թղ.** 173ա. «Սահմանիք եւ կանոնիք սուրբ Առաքելոցն ի ձեռն Կղեմայ. առաքեալն հեթանոսաց, երկրորդ կանոն»: Ա - ՃԵ կանոնք:

5. **Թղ.** 180ր. «Ի յառաջին կանոնաց Առաքելոց. Կարգեցին Առաքեալքն եւ եղին հաստատութեամբ»: Գ - ԺԱ կանոնք:

6. **Թղ.** 181ր. «Ի կանոնաց սուրբ Առաքելոյն Թաղէոսի հարց առաջին»:

7. **Թղ.** 182ա. «Կանոնիք երկրորդ ի նիկիականի, զոր եղին ՅԺԸ հարքն կրկնարանելով կարն ի կարնոյ, գլուխ Ճ (100) տասնուշորս»: Ա - ՃԺԲ կանոնք:

8. **Թղ.** 187ա. «Ներսէսի կարողիկոսի, եղրաւրն Գրիգորիսի Հայոց Կարողիկոսի կանոնիք զգուշաւոր քահանայից համառաւտ. Քահանայից պարտ եւ արժան է սրբութեամբ սպասաւորելո»: Ա - ԽԵ կանոնք:

9. **Թղ.** 192ա. «Ի կանոնաց Կիւրղի. Քահանայ որ զմկնընկէց աւրհնէք»:

10. **Թղ.** 192ր. «Նամոնիք ժողովածոյ վասն կարեաց. Արդ իմացաք ինչ մուկ»:

11. **Թղ.** 193ա. «Վասն սուրբ պատարագին. Որ յանգէտս մկանկ գինով»:

12. **Թղ.** 194ա. «Վասն հաղորդ տալոյ. Որ վասն ոխութեան»:

13. **Թղ.** 194ա. «Վասն պէսպէս հոսմանց ախտից որ ընդ իմին եւ ընդ արքիւմ. որ ընդ արուի եւ ընդ անասնոյ»:

14. Թղ. 195ա. «Վասն գեղշի բահանայից. Քահանայ որ գիմանայ»:
15. Թղ. 195բ. «Վասն մանկանց որ զան ի բահանայութեան. Որ ընդ պատռուածն երկի»:
16. Թղ. 196. «Կանոնի ժողովածոյ վասն զանազան ախտից. Վասն գերոյ մի' երդնուկ»:
17. Թղ. 198բ. «Վասն սուրբ խորիրդոյն. Եթէ բովանդակ խոր-հուրդն»:
18. Թղ. 200ա. «Նրանելի վարդապետին Գէորգայ Կաղճ կոչեցելոյ, վասն շարադրութեան քյոթոցն Պօղոսի չորեքտասանիցն թէ որպէս գրեցան, կարգեցաք մի ըստ միոչէ. Հռոմայեցւոց թուղթն առաջի եղեալ է, ոչ եթէ նա առաջին է»:

## ՑԻՇԱՏԱԿԱՐԱՆ

Թղ. 202բ. «(Փ)առք ամենասուրբ երրորդութեան Հաւը եւ Որդւոյ եւ Հոգւոյն սրբոյ, այժմ եւ անզրաւ յաւիտենից ամէն: Արդ գրեցաւ կանոն գիրքս ի մայրայքաղաքն Հալապ, ի դուռն Սուրբ Աստուածածնի եւ Սուրբ Քառասունի եկեղեցւոյն: ի թվականութեանս Հայոց ՌՀԿ (1724): Դարձեալ յիշեցէք զմահասի Խաչատուրն, որ ըստացաւ զսայ ի հալալ արք(եա)նացն» (կիսատ):

## 92

### ՎԱՐԴԱՆ ԱՅԳԵԿՑԻ

(1339 թ.)

Թերք՝ 212: - Մեծութիւն՝ 16×22: - Գրութիւն՝ միասիւն: - Նիւթ՝ թուղթ տոկուն: - Գիր՝ բոլորգիր շեղ: - Տող՝ 19: - Կիսախորան, լուսանցազարդ՝ թղ. 2ա անյաջող եւ աննշան: - Գրիչ՝ Մկրտիչ քահանայ: - Տեղի՝ «ի քաղաքս Ազախ ընդ հովանեաւ սրբոյն Գրիգորի»: - Ստացող՝ Սարգիս Լորեցի, որ կը կոչուի նաեւ Պարոն: - Կազմ՝ կմշեպատ տախտակ, հաւանաբար ժամկն: Կոնակը վերէն եւ վարէն բաց գոյն կաշխով նորոգուած, սակայն վերի մասը պոկուած այժմ: Անշնչին կողքը հաւանաբար ունեցեր է մետաղէ խաչ. այժմ մնացած են կոտրած քամի հետքեր: Կազմը մեծ ու փոքր կլորներով գծանշեալ: Ներսէն առաջին կողքը հին կանաչ մետաքսակերպ դիպակով ծածկուած

է, իսկ երկրորդ կողքը՝ կարմիր եւ սպիտակ մանր քառակուսի լաթով։ Թերթեզերքի կազմապահ կաշին պոկուած է, ինչպէս նաեւ երեք կաշիէ ականչներն ու կոճակները։ Թերթեզերքները ժամանակին կարմիր ներկուած, այժմ մաշած գունաթափ են։ - Հանգամանք՝ գործածութենէ աղտոտած։ վերակազմութեան ատեն թղ. 121 սպիտակ թուղթ զետեղուած՝ պակսող թերթի տեղ՝ Պահպանակ՝ սկիզբը թերթի մը կէսը, մագաղաթ, իսկ վերջը նոյն գրչագրէն ամբողջ թերթ մը կէսի ծալուած, որով ներկայիս երկու թերթ, երկաթագիր ԺԲ. դարու աւետարանի մը հատուած։ Սկիզբի կէս թերթը Մթ. Զ 25, իսկ վերջին թերթը Մթ. Զ 32: - Ծանօթութիւն «Զեռագիրս գնած եմ 35 տոլարի, Լոնտոն, 8 Մայիս 1946ին։ Լոնտոն զրկուած էր վաճառման, շարք մը ուրիշ ձեռագիրներու հետ, Պոլիսէն, հանգուցեալ Պետրոս Նշանեան գրավաճառէն»։

### ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

1. Թղ. 3ա. «Յանուն Աստուծոյ այս ինչ է եղեալ ի գիր յայս ըստ կարգիւ. Ա. Վասն սուրբ Երրորդութեան եւ զի յաջողեսցէ զգործս մեր։ Բ. Վասն թղթոց»։ ցանկ Ա. - Ի՞ գլուխներու։

2. Թղ. 4ա. «Ա. Ուղեղ՝ դաւանութիւն սուրբ Երրորդութեան գոհացողական բանիւ եւ աղաչանք աղերսանաւ հանդերձ, յաջողեալ գործս մեր անբերին կատարեալ, ուղղութեամբ հասանել առ նա. Ի սկիզբն հոգեւոր ձեռնարկութեանս մերոյ յառաջ քամենայն»։

3. Թղ. 5բ. «Բ. Թուղթի պարոն Պաղտին թագաւորացն եւ քրիստոսակը մեծ իշխանին. Զբրիստոսակիր անձին զսուրբ եւ զարքունական»։

4. Թղ. 7ա. «Գ. Գովութիւն վասն խոնարհութեան իշխանին. Ով վսեմական մեծագահ եւ թագաւորացն»։

5. Թղ. 10ա. «Դ. Վասն վերին Երուսաղեմի եւ անհան հանգստեան արդարոցն. Բե՛ր զաստուածապատկեր միտս քո»։ Բնագրէն թուղթ մը, թղ. 10բ-11աի միջանկեալ, անջատուած եւ փոխադրուած է ձեռագրին վերջաւորութեան, այս է թղ. 212։

6. Թղ. 21բ. «Ե. Վասն հոգոցն թէ որպէս կան եւ կամ զինչ է հանգստան հոգաւ նոցա. Ահաւասիկ փոքր մի քննեցաք»։

7. Թղ. 28ա. «Զ. Վասն բարի գործոց թէ որք են եւ կամ քանիք. Քանզի որ ինչ էր յաստուածեղէն գիրս քննեացք»։

8. Թղ. 30ա. «Է. Վասն աղաւթից զի մեծ է առաջի Աստուծոյ. Արդէ աղաւթքն անբաւ բարութիւն»։

9. Թղ. 38բ. «Ը. Վասն պահոց թէ որքան բարի է առաջի Աստուծոյ. Արդ ով ի մարդկանէ կարողանայ»։

10. Թղ. 43թ. «Թ. Վասն աղքատութեան եւ խոնարհութեան. *Մեծ է գովութիւն կամաւոր աղքատութեան»:*

11. Թղ. 55թ. «Ժ. Վասն ողորմութեան եւ սիրոյ եւ գքութեան. եւ արդ որ եւ հետեւ սկիզբն եղեւ»:

12. Թղ. 62ա. «ԺԱ. Վասն խոստվանութեան զղշման եւ ապաշ-խարութեան. եւ քանզի հասեալ ժամանեցաք»:

13. Թղ. 68ա. «ԺԲ. Վասն դժոխոց եւ վասն չար եւ դառն տան-չանաց նոցա. եւ արդ քանզի չնորհաւքն Աստուծոյ պատմեցաք»:

14. Թղ. 77ա. «ԺԳ. Վասն մեղաց թէ որք են եւ քանիք. եւ քանզի փոքր մի ծանուցաք»:

15. Թղ. 87թ. «ԺԴ. Վասն որովայնամոլութեան եւ արբեցութեան զար է կատարեալ եւ պատճառ»:

16. Թղ. 96թ. «ԺԵ. Վասն կոպազտութեան եւ կախարդութեան. Կոպազտութիւն սկիզբն եւ մայր եղեւ»:

17. Թղ. 107ա. «ԺԶ. Վասն շնուրեան եւ պոռնելութեան եւ ար-ուագիտութեան եւ անասնագիտութեան. Ահա դառնատեսակ չար եւ անուն կորստեան»:

18. Թղ. 116թ. «ԺԷ. Վասն զրկանաց գողութեան եւ վաշխից. Արդ պարտ եւ պատշաճ է մեզ քննել»:

19. Թղ. 123թ. «ԺԸ. Վասն ոխակալութեան եւ ատելութեան, մա-խանաց եւ բարկութեան, նախանձու եւ այլ բազում մանրագոյն մեղաց որք շրջականի ասին ի գրոց սրբոց. *Մեծագոյն չար եւ յաղթանդամ գազան»:*

20. Թղ. 129թ. «ԺԹ. Վասն յիշոցնատուացն որք հայիոյեն զԱս-տուած. Գազան չարագոյն է յիշոցնատուն»:

21. Թղ. 134ա. «Ի. Վասն տասն համարոյ որ է թիւ կատարեալ եւ խորհրդական եւ լցեալ աստուածային գերակատար իմաստութեամբ. եւ քանզի առեալ յաստուածական պատուիրանաց»:

22. Թղ. 149ա. «ԻԱ. Վասն փառաւոր եւ աննառ գալստեանն Որդ-ւոյն Աստուծոյ ընի ամբ երկնից եւ վասն ահագին եւ անաչառ դա-տաստանի նորա եւ կատարածի աշխարհի. Քանզի ծանուցաք սակաւ մի գտեսակս մեղաց»:

23. Թղ. 159ա. «ԻԲ. Վասն ծննդեան նեռինն եւ դառն ժամանակին որ լինելոց է վասն սատակման նորա. եւ արդ չափով ճառեցաք»:

24. Թղ. 177ա. «ԻԳ. Վասն ծուլութեան եւ համարձակութեան մե-ղաց եւ վասն նուազութեան մեղաց. եւ արդ քանզի խնամող եւ մար-դասէր»:

25. Թղ. 193թ. «ԻԴ. Աղերս եւ պաղատանիք առ Աստուած վասն ամենայն աշխարհի. եւ արդ որովհետեւ այսպիսի աստուածային»:

Բնագրէն տարբեր գրչութեամբ, յետագայ դարերուն աւելցուած են հետեւալ գրութիւնները.

26. Թղ. 2ա. «Այս է համարք աստուածաշնչին տեսրին, թէ քանի տեսր է, եւ ամէն տեսրն բանի բուկստ է... Աստուածաշունչս բոլոր ԽԳ տեար է եւ Բ թուլխտ»: Վերջ՝ թղ. 2ը. «Կամ պակաս քան զայս սակայն այսչափ լինի անսպալ»:

27. Թղ. 202ք. «Առակք պիտանիք. Այր մի հողագործ շինեաց ականատու»:

28. Թղ. 204ա. «Բանք վասն յիշոց(ա)տըւի է. Ով պատուական հարք եւ եղբարք իմ սիրելիք միաբայն ամենայն քրիստոսասէր ժողովուրդք»:

## ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ

1. Թղ. 201ք. «Փառք ամենասուրբ Երրորդութեանն անբաժանելի Հաւը եւ Որդւոյ եւ Հոգ(ւ)ոյն սրբոյ, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն: Գրեցաւ Գիրզս այս խրատ անլուծանելի ի պէտս հոգւոյ եւ մարմնոյ, եւ իմ հայեցեալ ի բանս աւգութեան, ցանկացող եղէ ես նուաստ ծառայս Աստուծոյ Սարգիս Լոռեցի, եւ ետու գրել զսա ի վարժումն եւ ի կրթութիւն անձին իմոյ եւ ի սրբադումն կենաց իմոց եւ ի պատճառս սպաստութեան ճանաչել եւ յիշել զանթիւ համարս երախտեաց իմոյ արարչին, եւ սովաւ յարաժամ մատուցանել զգոհաբանութիւն գերագոյնին բարեաց: Այլ եւ ի յիշատակ ինձ եւ ծնողաց իմոց առ Քրիստոս հանկուցելոցն:

«Արդ գրեցաւ սա ի քաղաքս Ազախ, ընդ հովանեաւ Սրբոյն Գրիգորի, ձեռամբ անիմաստ եւ անարժան սուստ քահանայի, անուամբ միայն կոչեցեալ Մկրտիչ, որ եւ աղաչեմ զամենեսեան անմեղադիր լինել վասն անարհեստութեանն եւ վասն սղալանացն, զի կայր մեր այս էր:

«Աղաչեմ յիշել ի Տէր զՊարոն Սարգիսն, որ ստացաւ զսա ի հալալ արդեանց իւրոց. ընդ նմին եւ զՄկրտիչ քահանայ գծող սորին. եւ որ յիշէ ինքն յիշեալ լիցի առաջի զենլոյն Քրիստոսի: ի թուին ԶՁՀ (1339), Դեկտ.»:

2. Թղ. 28ա. «Զստացող սորին զՊարոն Սարգիս յիշեսջիք ի Տէր եւ Աստուած զձեզ յիշէ»:

## 93

## ԱԼԵՏԱՐԱՆ

(1672 թ.)

Թերթ՝ 211:- Մեծութիւն՝  $20 \times 25,5$ : - Գրութիւն՝ երկարւուն: - Նիւթ՝ թուղթ հաստ: - Գիր՝ բոլորգիր կանոնաւոր: - Տող՝ 23: - Մաթրանկարչութիւն՝ սկիզբը Կարպիանոսի թուղթին եւ կանոններուն վեց խորանները, ընտիր ծաղկումով, կարմիր եւ կանաչ գոյներով: Թղ. 7թ, 64թ, 102թ, 163թ՝ Աւետարանիչներու մանրանկարները. Թղ. 8ա, 65ա, 103ա եւ 164ա՝ չորս աւետարաններու սկզբնաւորութեան՝ խորան, լուսանցազարդ եւ զարդագիր: Բոլորն ալ ընտիր, վարժ եւ մաքուր մանրանկարուած եւ ծաղկուած վարպետ նորոգէ, գունագեղ եւ ոսկեզարդ: Ունի կարմիրով 105 թուչնագիր, 94 զարդագիր, 11 թուչնածեւ, 174 զարդածեւ, 8 ճարտարապետական եւ 1 սափորածեւ լուսանցազարդեր, բոլորն ալ ընտիր եւ վարժ գծուած, սակայն սովորական ձեւերով: - Գրիչ՝ Յովհաննէս, որդի Տէր նոյ քահանայի եւ Մարգարտի: - Տեղի՝ Զէյթունի Զարխափան Ս. Աստուածածին եւ Ս. Գրիգոր Լուսաւորիչ Վանք: - Ստացող՝ Վարդենէ, որ Աւետարանը կը նուիրէ Ս. Յակով եկեղեցւոյն: - Կազմ՝ շագանակագոյն կաշեպատ տախտակ, ոչ դրոշմեալ: Ունեցած է արծաթ կազմ, որուն գամերէն քանի մը հատը մնացած են: Առաջին կողքը վարէն, այն է՝ կռնակի կողմէն երկու մատնաչափ ճաթած է. կողքին երեսը ունի խոշոր ծակ մը, ուր կաշին պոկուած է, ինչպէս նաև քանի մը ուրիշ ծակեր: Երկրորդ կողքին տախտակը կոտրած եւ վարէն ալ մաս մը պակաս է, կաշին պատուած: Թերթեղերքները կարմիր ներկուած, այժմ գունաթափ: - Հանգամանք՝ սկիզբի երկու թերթերուն արտաքին վարի անկիւնը պատուած՝ եւ արծաթ կազմին գամերուն պատճառով ծակծկած: Վերջաւորութեան 11 թերթ խոնաւութենէ եւ գործածութենէ անկիւնը մաշած: Ընդհանուրին մէջ լաւ պահուած է, սակայն գործածութենէ լուսանցքները թխուած են: - Պահպանակ՝ սկիզբը խոշոր մագաղաթ երկաթագիր թերթ մը երկուքի ծալուած, իսկ վերջինը, որուն գրերուն հետքերը մնացած են փայտէ կողքին վրայ, կը պակաի: Գրչութիւնը միջին Մեսրոպեան երկաթագիր, ԺԲ. դարէն, Մաշտոցի Պսակի արարողութենէն հատուած մը: - Մաթօրութիւն՝ «Աւետարանս գնած եմ Պէյրութ, լիբանանցի հնավաճառէ մը, 1950ին»:

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

1. Թղ. 8ա. Աւետարան ըստ Մատթէոսի:
2. Թղ. 65ա. Աւետարան ըստ Մարկոսի:
3. Թղ. 103ա. Աւետարան ըստ Ղուկասու:
4. Թղ. 164ա. Աւետարան ըստ Յովհաննու:

## ՑԻՇԱՏԱԿԱՐԱՆ

Թղ. 210թ. «Փառք անբաժանելի ամենասուրբ երրորդութեանն Հօր Եւ Որդոյ եւ Հոգույն սրբոյ. ամէն: Ծնորհիւ ամենակարող Փրկչին Յիսուսի, յանգ ելեալ աւարտեցաւ ունող աւետեաց արքայութեան քառակտակ գետաբուզի սուրբ աւետարանս, ի թվին ՌՃԻԱ (1672), ի յերկիրս Գերմանիկոյ, ի գեղաքաղաքս ի Զեբուն, ընդ հովանեաւ սրբուհոյ ամէնօրհնեալ Աստուածածնին Զարախափան (յ)որջորջելոյ մենաստանին եւ սրբոյն Գրիգորի մերոյ Լուսաւորչին եւ այլ եկեղեցեացս եւ սրբութեանցս՝ որ աստ կան յօդնականութիւն Հայոց ազգի: Ի կաթողիկոսութեան Կիւլիկեցւոց Տէր Խաչատուրին եւ Տէր Դաւթին, եւ յառաջնորդութեան մեր վանացս եղօրոս մերոյ Ստեփանոսի Վարդապետի եւ այլ միաբան կարդաւորաց: Գրեցաւ սա ձեռամբ Յովհաննէս հողիկ եւ կոխան ամենայնի նուաստ ոչընչի, ի խնդրոյ աստուածասէր Վարդենէ եւ հօրն Փօլատին եւ մօրն Փաշային եւ եղբարցն Մելքոնին եւ Գրիգոր տիրացուին եւ հաւասար ննջեցելոցն. ամէն:

«Արդ որք հանդիպիք սմա տեսանելով կամ գաղափարելով, յիշեցէք զստացող սորա զբարեմիտ Վարդենին, որ լստացաւ զսա ի հալալ ընչեցն իւրոց, յիշատակ ի դուռն Սուրբ Յակոբայ: Ով ոք հանդիպիք յիշեցէք ընդ նմին եւ զեղկելի գրչիկս Յովհաննէս ոչինչս, եւ գծնօղս մեր զՏէր նոյ Քահանայն եւ զՄարգրիտն, որ փոխեալ է առ Քրիստոս, եւ զեղբարքս իմ զՍտեփանոս Վարդապետն եւ զԱւետիքն, եւ զորդիքն մեր զԽաչատուր դպիրն եւ զՆազարէրն եւ գԴաւիթին եւ զամենայն ագպային իմ: Նաեւ յիշեցէք ի Քրիստոս զուսուցիչքն մեր զՏէր Յոհանն եւ զՏէր Յովհաննէս, որ փոխեալ են առ Աստուած: Զոր Տէր Աստուած, յոյսն ամենայնի Քրիստոս Փրկիչ մեր՝ ձեզ յիշողացդ եւ մեզ յիշեցելոցս առ հասարակ ողորմեսցի ի միւսանգամ գալստեանն իւրում. ամէն: Հայր մեր որ յերկինս, սուրբ եղիցի անուն քո, եկեսցէ արքայութիւն քո ի վերայ մեր. եղիցի:

«Ով ոք որ հանդիպիք սմա, կարդալով կամ օրինակելով, յիշեցէք ի մաքրափայլ յաջօթս ձեր զՎարդենին, զհայրն եւ զմայրն եւ զեղբարքն եւ զեղբարք կանայքն. ով ոք որ հանդիպիք՝ Աստուած ողորմի ասացէք: Ով ոք (յ)անդէնի զսա ծախել կամ գրաւ դնելոյ, զմասն Յուդայի եւ զպատիժն Կայենի առցէ, Գծմէ հայրապետաց անէծքն ընկալցի. ամէն»: